ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

Ամբիոնի վարիչ
Ա.Գ.Թունյան

«23» հունիսի 2023թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ. Մանուկյան Արսեն Ավետիքի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ ՀՀ քաղաքացիական իրավունք (հատուկ մաս)

Բակալավրի ծրագիր

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 Իրավագիտություն

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն

Տնտեսական և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքը և ընդհանուր առմամբ ապրանքադրամային հարաբերությունները պետության և հասարակության կյանքում առանցքային տեղ են զբաղեցնում: Քաղաքացիական իրավունքը կարգավորում է այն գույքային հարաբերությունները, որոնք հիմնված են այդ հարաբերությունների մասնակիցների ազատ կամահայտության, սեփական հայեցողության, կողմերի իրավահավասարության, գույքի անձեռնմխելիության, պայմանագրի ազատության և մասնավոր գործերին որևէ մեկի կողմից կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքների վրա: ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Սահմանադրությունը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք (Հոդված 60): Ժառանգելու իրավունքը նույնպես երաշխավորվում է Սահմանադրությամբ: Մտավոր սեփականության իրավունքը պաշտպանվում է օրենքով: Իսկ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն Յուրաքանչյուր ոք ունի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

2. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքացիաիրավական պայմանագրերին, մասնավորապես՝ գույքի օտարման (առուծախի, մատակարարման, ռենտայի, փոխանակության, նվիրատվության), վարձակալության, գույքի անհատույց օգտագործման, աշխատանքների կատարման (կապալի, շինարարական կապալի, կենցաղային կապալի), գիտահետազոտական, փորձարարա-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման, ծառայությունների վճարովի մատուցման, հանձնարարության, կոմիսիայի, գործակալության, պահատվության պայմանագրերի, բանկային ավանդի և բանկային հաշվի պայմանագրերի, վարկի և փոխառության պայմանագրերի, ֆակտորինիգի, ֆրանչայզինգի, գույքի

հավատարմագրային կառավարման պայմանագրերի, ապահովագրության (ԱՊՊԱ, կամավոր և պարտադիր ապահովագրության, գույքի և կյանքի ապահովագրության) պայմանագրերի հասկացությանը, առանձնահատկություններին, պայմանագրի տարրերին, կողմերի իրավունքներին և պարտականություններին, պայմանագրերի փոփոխման և դադարման կարգին և հիմքերին: Դասընթացը ներառում է նաև դասախոսություններ դելիկտային պարտավորությունների ծագման, դրանց առաջացման հիմքերի, պատճառված վնասի փոխհատուցման, ինչպես նաև բարոյական վնասի փոխհատուցման, ներառյալ՝ վիրավորանքի և զրպարտության հասկացությունների ՀՀ քաղաքացիաիրավական կարգավորումների վերաբերյալ:

3. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է՝

- Տիրապետի վերը թվարկված պայմանագրերը կարգավորող օրենսդրության և դրա կիրառման առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց առնչվող առանձին տեսական հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքների:
- Հասկանա թվարկված քաղաքացիաիրավական պայմանագրերի գործնական նշանակությունը քաղաքացիական իրավունքում, դրանց իրավական կարգավորման տարբեր առանձնահատկությունները, դրանց միջև տարբերությունները:
- Ուսումնասիրի և վերլուծի քաղաքացիաիրավական պայմանագրերի իրավակիրառ պրակտիկան:
- Կարողանա թվարկված պայմանագրերի վերաբերյալ տեսական գիտելիքները կիրառել գործնականում, կարողանա կազմել քաղաքացիաիրավական պայմանագրեր:
- վերլուծել իրավակիրառ պրակտիկայից բերված գործերի կապակցությամբ դատարանների և մյուս իրավապահ մարմինների կողմից ընդունված ակտերը:

Իմանա և տիրապետի

Քաղաքացիական իրավունքի ոլորտին վերաբերվող նորմատիվ իրավական ակտերը՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ օրենք <<Բաժնետիրական ընկերությունների մասին>>
- ՀՀ օրենք <<Անհատ ձեռնարկատիրոջ մասին>>

- ՀՀ օրենք <<Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մասին>>
- ՀՀ օրենք <<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման>>
- ՀՀ օրենք <<Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին>>
- ՀՀ օրենք <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>>
- ՀՀ օրենք <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>
- ՀՀ օրենք <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>>
- ՀՀ օրենք <<Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին>>
- ՀՀ օրենք <<Հրապարակային սակարկությունների մասին>>
- ՀՀ օրենք <<Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին>>
- ՀՀ օրենք <<Ավտոտրանսխորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>>

4. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	**Ամբ ողջը, ակ. ժամ.**	**Բաշխում ըստ կիսամյակների**					
		1 Կիս.	**2 Կիս.**	**3 Կիս.**	**4 Կիս.**	**5 Կիս.**	**6 Կիս.**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**108**				**108**		
1.1. Լսարանային պարապմունքներ:	**34**				**34**		

1.1.1.Դասախոսություններ	**18**				**18**		
1.1.2.Գործնական աշխատանքներ	**16**				**16**		
1.2. Ինքնուրույն աշխատանք	**74**				**74**		
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**	**ստուգարք**					

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Գործնական. (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. Պարտավորական իրավունքի հասկացությունը և կառուցվածքը (սուբյեկտները, առարկան և բովանդակությունը). Պարտավորությունների կատարման ապահովման եղանակները	2	1	1	4
Թեմա 2. Ընդհանուր դրույթների պայմանագրերի մասին. Պայմանագրի հասկացությունը և նշանակությունը, պայմանագրի բովանդակությունը և ձևը, պայմանագրի կնքումը, փոփոխումը և դադարումը	2	1	1	4
Թեմա 3. Գույքի օտարման պայմանագրերի հասկացությունը և տեսակները, դրանց առանձնահատկությունները. Առուվաճառքի պայմանագիր. Մանրածախ առուվաճառք, մատակարարում, էներգամատակարարում, անշարժ գույքի առուվաճառք	4	2	2	8
Թեմա 4. Գույքի վարձակալության և անհատույց օգտագործման պայմանագրերի հասկացությունը և նշանակությունը	4	2	2	5

Թեմա 5. Կապալ և Գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագիր	2	1	1	5
Թեմա 6. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր: Փոխադրում, տրապսորտային էքսպեդիցիա	2	1	1	4
Թեմա 7. Վարկ և փոխառություն, Պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր (ֆակտորինգ)	2	1	1	7
Թեմա 8. Բանկային ավանդ և բանկային հաշիվ	2	1	1	7
Թեմա 9. **Պահանատվություն.** Պահատվության պայմանագրի տեսակները	3	2	1	7
Թեմա 10. Ապահովագրության պայմանագիր	2	1	1	7
Թեմա 11. Կոմիսիայի, հանձնարարության և գործակալության պայմանագրեր	2	1	1	4
Թեմա 12. Հավատարմագրային կառավարման պայմանագիր. Ֆրանչայզինգ. Համատեղ գործունեության պայմանագիր	2	1	1	4
Թեմա 13. Ոչ նյութական բարիքներ. Բարոյական վնասի հասկացությունը. Զրպարտություն և վիրավորանք, բարոյական վնասի փառխհատուցումը	2	1	1	4
Թեմա 14. Վնաս պատճառելուց բխող պարտավորություններ. հասկացությունը, առաջացման պայմանները, պատճառված վնասը վերականգնելու պարտականությունը. Անհիմն հարստացում	3	2	1	4
Ընդամենը	**34**	**18**	**16**	**74**

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Պարտավորական իրավունքի հասկացությունը և կառուցվածքը (սուբյեկտները, առարկան և բովանդակությունը). Պարտավորությունների կատարման ապահովման եղանակները

Թեմա 2. Ընդհանուր դրույթների պայմանագրերի մասին.
Պայմանագրի հասկացությունը և նշանակությունը, պայմանագրի բովանդակությունը և ձևը, պայմանագրի կնքումը, փոփոխումը և դադարումը

Թեմա 3. <<Գույքի օտարման պայմանագրերի հասկացությունը և տեսակները, դրանց առանձնահատկությունները>>
Գույքի օտարման պայմանագրերի հասկացությունը և տեսակները, դրանց առանձնահատկությունները. Առուվաճառքի պայմանագիր. Մանրածախ առուվաճառք, մատակարարում, էներգամատակարարում, անշարժ գույքի առուվաճառք: Փոխանակման պայմանագիր, Նվիրատվության պայմանագիր, Ռենտայի պայմանագիր. Մշտական ռենտա, ցմահ ռենտա:

Թեմա 4. Գույքի վարձակալության և անհատույց օգտագործման պայմանագրերի հասկացությունը և նշանակությունը: Վարձույթ, անշարժ գույքի վարձակալություն, ֆինանսական վարձակալության (լիզինգի) հասկացությունը, տրանսպորտային միջոցների վարձակալություն:

Թեմա 5. Կապալի և Գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագրեր: Շինարարական կապալ, կենցաղային կապալ:

Թեմա 6. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր. Հասկացությունը և նշանակությունը: Ծառայությունների համար վճարելը, պայմանագրից միակողմանի հրաժարվելու իրավունքը**:** Փոխադրում, տրանսպորտային էքսպեդիցիա: Ուղևորների և բեռների փոխադրման պայմանագրեր, հասկացությունը, դրանց նշանակությունը, կնքման կարգը

Թեմա 7. Վարկ և փոխառություն, Պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր (ֆակտորինգ)

Թեմա 8. Բանկային ավանդի և բանկային հաշվի պայմանագրեր, դրանց հասկացությունը, բանկային ավանդների երաշխավորումը ՀՀ-ում

Թեմա 9. Պահանատվություն. Պահատվության պայմանագրի տեսակները. Պահատվություն պահեստում պահատվություն տրասպորտային կազմակերպության պահասենյակում, անձնական իրերի պահատվությունը հյուրանոցում
Թեմա 10. Ապահովագրություն. Ապահովագրության հիմնական հասկացությունները,

ԱՊՊԱ, գույքի ապահովագրություն, կյանքի ապահովագրություն, ապահովագրական ընկերություններ և դրանց լիցենզավորումը

Թեմա 11. Կոմիսիայի պայմանագիր, հանձնարարություն և գործակալության պայմանագիր.

Թեմա 12. Հավատարմագրային կառավարման պայմանագիր: Ֆրանչայզինգ: Համատեղ գործունեության պայմանագիր

Թեմա 13. Ոչ նյութական բարիքների և բարոյական վնասի հասկացությունը. Ոչ նյութական բարիքների հասկացությունը: Անձի կյանքը և առողջությունը, արժանապատվությունը, անձնական անձեռնմխելիությունը, պատիվն ու բարի անունը, գործարար համբավը: Վիրավորանք և զրպարտություն: Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:

Թեմա 14. Վնաս պատճառելուց բխող պարտավորություններ
Վնաս պատճառելուց բխող պարտավորությունների հասկացությունը, առաջացման պայմանները: Վնաս պատճառելուց բխող պարտավորությունների սուբյեկտները, օբյեկտները և բովանդակությունը: Անհիմն հարաստացման հասկացությունը և այն վերադարձնելու պարտականությունը. Չվերադարձվող անհիմն հարստացումը:

4. Գրականության ցանկ

Հիմնական

1. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 1999.
2. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг. М., 2002.
3. Брагинский М.И. Договор подряда и подобные ему договоры. М., 1999.
4. Брагинский М.И. Договор хранения. М., 1999.
5. Витрянский В.В. Договор аренды и его виды: прокат, фрахтование на время, аренда зданий, сооружений и предприятий, лизинг. М., 1999.
6. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 1997.
7. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Том II, полутом 1. М., 2000.

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, Երկրորդ հրատարակություն, փոփոխություններով և լրացումներով. (Տ. Բարսեղյան, Ա.Հայկյանց, Գ. Ղարախանյան, Ս. Մեղրյան) խմբ., Եր., ԵՊՀ հրատ., 2008:

Լրացուցիչ գրականության ցանկ

1. Комментарий к Гражданскому Кодексу Российской Федерации: часть вторая (постатейный), под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого, м. 2005г

Վերջնական ստուգարք և քննություն.

Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները: